

Հաս Սերք. ԵՒՅՏ. Գերման աւետարանական եկեղեցական հոմիլետեաի վերայ շատերը կասկածով են նայում, կարծում են, որ միանալով այդ հոմիլետեաին՝ կը կորցնեն իրանց ինքնուրոյնութիւնը, աղաաութիւնը, կախման դրութեան մէջ կը մնան. և ութեղացած հոմիլետաը կարող կը լինի Հռոմի եկեղեցու դերը կատարել իւր հաւատակիցների վերաբերութեամբ:—Անհաւատալի բան չը կայ: Այս հոմիլետեաի նման մի դաշնակցութիւն են կաղմել Աւստրիայի աւետարանական լուտերական գերմանացիներն էլ նոյն նոյեմբերի 10-ին, կենդրոնավայր ընտրելով Վրեննան, որի նպատակը պէտք է լինի՝ ժողովներ կաղմելով, երեկոյթներ, հրապարակական դասախօսութիւններ և տօներ սարքելով, դրքեր հրատարակելով, լուտերական համայնքների թշուառներին օգնելով, եկեղեցիներ շինութեան օժանդակելով, լուտերականներին պաշտպանելով՝ թեթեւացնել նրանց կարիքները, . . . :



**ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ**

Վերջաբանում աւելորդ չէր լինի համառօտ կերպով մտանանիչ անել այդ երկու համաշխարհային կրօնների հիմնական տարբերութիւնների վերայ՝ որպէս զի քրիստոնէութեան ճշմարտութիւնը և աստուածային լինելը ևս առաւել պարզ աչքի ընկնի:

Բուդդան իւր դարի որդին էր: Նա մեծացաւ արևելեան ճոխութեան մէջ, առատութեամբ ճաշակեց կեանքի վայելչութիւնը, ունէր կանայք և պարեկներ, և միայն կեանքից զղուելուց յետոյ դարձաւ նա յեղափոխական: Երբ Բուդդան մի ըզբօսանքի ժամանակ, ճանաչեց կեանքի դառնութիւնն ու վըտերը, պատահելով մի ճերուհու, դօսացածի, մեռեալի և մի ճգնաւորի, որը նորան—կեանքից յուսահատուածին, խորհուրդ տուեց վախչել աշխարհից, այն ժամանակ նա անհաւատարմութեամբ թողեց իւր կնոջը և կեանքի տանջանքից մի փրկութիւն գտնելու համար, ողորմութիւն հաւաքող կրօնաւոր դարձաւ: Վերջապէս նա իւր ժամանակի փիլիսոփայութեան եղ-

բակացութիւններէց կազմեց մի նոր վարդապետութիւն և ինքը հանդէս եկաւ իբրև Բուզդա, իբրև «լուսաւորիչ»: Այսպիսի ներքին յուզումներ Յիսուսը չէ ունեցել. նա կարելի չունէր իւր անցեալի համար տանջուելու: Նա մեծանում էր ինչպէս ամեն ոք, ինչպէս պատուիր ծառի, նորա հողին չէր յուզում դգայականութիւնից. նա ոչ հաւատադրուծ էր և ոչ որևէ արատ կամ բիծ ունէր: Ոչ թէ կեանքից զզուելով, այլ երկնաւոր շօր կոչը բերեց նորան սիրոյ և փրկութեան կրօնի փշալից ճանապարհի վերայ:

Բուզդան սովորական, իւր տեսակի մի հասարակ բազդաւոր մարդ էր:—«Արդեօք, Վսեմափայլ Տէր, դուք բազդաւոր էք ապրում», հարցրեց նորան մի անգամ մի գիւղացի: «Այո, աշակերտ», պատասխանեց նա, «ես ապրում եմ բազդաւոր: Ես այն անձնաւորութիւններէց մէկն եմ, որոնք երկրիս վերայ բազդաւոր են ապրում»: Բուզդային պահասում էր միմիայն գործունեայ տաք սէր գէպի իրեն հաւատար մարդը: Մարդկային տանջանքներից ազատուելու համար նա ուրիշ ոչ մի սիտիանք չունէր քան եթէ՝ «եղիւր կրօնաւոր, մեռիւր կեանքի և քեզ համար»: Նորա սէրը կրաւորական սէր էր: Այդ պատճառով այդ սէրը աէրութեան, ընտանեկան և ժողովրդի կեանքի վերանորոգութեան համար ո՛չ մի օգուտ չունեցաւ: շանդամանքները կարող են միևնոյնը մնալ, բայց կրօնաւորը աշխարհային գործերի և հողսերի մէջ ո՛չ մի մասնակցութիւն չպիտի ունենայ: Եւ այդ մարդը, որ ողորմութիւն էր հաւաքում, այնու ամենայնիւ այնուական մնաց, իւր համար բարձր դասակարգից աշակերտներ ընտրեց և իւր հողւոր օրհնութիւնից զրկում էր հէնց նոցա, որոնք աւելի կարելի ունէին. օր. հիւանդներին, մինչև 15 տարեկան երեխաներին, ճորտերին, սարուկներին, աստիճանաւորներին և զինւորներին, վերջիններին յատկապէս այն պատճառով, որ աէրութիւնը կը դադարէր դոյութիւն ունենալուց, եթէ բոլոր զինւորները կրօնաւոր դառնային: Բուզդայի կրճքի տակ չէր բաքախում տաքարիւն մի սիրտ և նա մարդկայինի համար ո՛չ մի զգացմունք չունէր: Արքան տարբերում է նորանից Քրիստոսը. Սա տաճում է կատարեալ, ջերմ սէր գէպի ամեն մի մարդ, մանաւանդ գէպի աշխատաւորները և ճնշուածները, այդ սէրը կամենում է կեանքի բոլոր յարաբերութեանց մէջ նոր հողի մացնել, նա տարածուում է նոյն իսկ թշնամիներէ վերայ և ներում է նոցա, այդ սիրով Քրիստոս գնում է խաչուելու—և մեռնելու մեղաւորի մահուամբ մեղաւոր աշխարհի համար: Բուզդան վախճանուեց խորին ծերութեան մէջ թու-

Նաւորուած խողի միս ուտելով, իսկ Քրիստոս աշխարհի մեղքերի համար կամաւորապէս իւր կեանքը զո՛հ բերեց: Նորա մահը իւր խոնարհութեան պատիւ և իւր կենսունակ սիրոյ վերջաբանն էր: Այդ սէրը մեզ համար մի մխիթարանք է, որ չնայած մեր մեղաւոր լինելուն, այնու ամենայնիւ մենք կարող ենք մեր հայեացքը հաւատով դէպի մեր երկնաւոր Հայրն ուղղել: Բուդդան—աշխարհից մի փախստական, աշխարհն արհամարհող, բռթամիտ մի կրօնաւոր էր, իսկ Յիսուսը—աշխարհի Փրկիչ: Երբ Բուդդան վերափոխուեց Նիրվան, նա թողեց իւր ախուր աշակերտներին միմիայն իւր վարդապետութիւնը: «Աւրեմն Անանդա» ասաց մեռնողը, «գուցէ դուք կարծում էք, թէ գործը կորցրեց իւր ուսուցչին, մենք այլ ևս ուսուցիչ չունինք: Անանդա, դուք այդպէս երբէք չպիտի մտածէք: Այն վարդապետութիւնը և օրէնքները, որ ես ձեզ ուսուցի և յայանեցի, նորա կլինին ձեր ուսուցիչն իմ տեղ»: Քրիստոս վախճանուելիս իւր հեռակողներին թողեց ոչ միայն աստուածային սիրոյ աւետարանը, սօ խորհուրդները, այլ և իւր հօգին և յայանեց նոցա իւր երկրորդ փառաւոր գաղութար: Արդեօք հարկաւոր է խօսել նաև Քրիստոսի յարութեան—աշակերտների հաւան ամբացնող և մեր քրիստոնէական եկեղեցին հաստատող այդ հրաշալի դէպքի մասին: Աստուծոյ կողմից այդ նորա կենաց ապացոյցն է, իսկ մեզ համար փաստ, որ ոչ թէ Բուդդան, այլ միայն նա է «ճանապարհը, ճշմարտութիւնը, կեանքը, և որ նա մեզ հետ է մինչև աշխարհի վախճանը»:

Այդ պատճառով Քրիստոս աստուածային կրօնի կենդրոնն է կազմում, և առանց Քրիստոսի անձնաւորութեան այդ կրօնը կը կորցնի իւր ոյժն ու ոգին: Իսկ բուդդայականութիւնը կարող է իւր հիմնադրի հետ առանց մի օրևէ յարաբերութիւն ունենալու գոյութիւն ունենալ: Այստեղ բուդդայականութիւնը և Բուդդան գոյութիւն ունին զառ զառ, և երբ Բուդդան մի անգամ նախագծել է վերկութեան ճանապարհը, ամեն մարդու մնում է միայն գնալ Նիրվանի այդ սառն և մութ շաւղով առանց երկնքից օգնութիւն յուսալու, առանց կենդանի հաւատի ուսուցչի ներկայութեան *):

Նոյն իսկ Բուդդան ինքն ընդունում էր, որ բուդդայա-

*) Վերջին դարերի բուդդայականութիւնը շատ փոփոխութեան ենթարկուեց ևւ սեղծեց իւր համար Բուդդայի աստուածութիւնը, երկինքը յի աստուածներով, անձնական երշակութիւնը ևւ դժոխք—մի փաստ, որ նիւհիլիստական փիլիսոփայութիւնը ժողովրդին բաւականութեամբ չէր տալիս:

կանութիւնը իւր սիւսեմատիքական կազմակերպութեան մէջ անհետևողական է և արամաքանական ոչ մի կապ չունի, որ նա արմատական նիւթապաշտութեան և ծայրահեղ քնազանցութեան միաւորութեան մի խառնուրդ, վերին աստիճանի պահասաւոր մի վարդապետութիւն է: «Աշակերաններ, ասում է Բուդդան, ինչ որ ես իմացայ և ձեզ չյայտնեցի աւելի շատ է, քան ինչ որ ես ձեզ յայտնեցի»: Սակայն գլխաւոր հիմքերը այդ վարդապետութեան երևան են դալիս փոքր ի շատէ պարզութեամբ: Էսպէս Աստուած գոյութիւն չունի, ահա այդ նիհիլիտական փիլիսոփայութեան եզրակացութիւնը: Աստուծոյ տեղ աշխարհը կառավարում է պատճառականութեան օրէնքը; հետեանքի և գործողութեան շաղկապման անսղոք օրէնքը: Այս մեքենան, ինչպէս և Կարման (Karma) գործում է ամենայն ճշտութեամբ: Ահա բուդդայական աստուածութեան նախախնամութիւնը: Սա մի կոյր քինախնդիր է, որ ի մի է ժողովում աշխարհի վերայ պատահած դէպքերը և դոցանից հոգւոյ էութիւնը կազմում: Մենք ոչ այլ ինչ ենք, եթէ ոչ մեր անցեալ կեանքի յանցանքների և կամ կատարած ծառայութեանց արդիւնք: — Ընդհակառակը, մենք քրիստոնեաներս Յիսուս Քրիստոսի յայտնութեան շնորհիւ հաւատում ենք Աստուծուն—Երկնաւոր շօքը, Նորա ողորմածութեանը և սիրուն, այդ պատճառով էլ մենք կարող ենք Նորան աղօթել կատարեալ հաւատով, կարող ենք ամեն տեսակ թշուառութիւնների և կարիքի մէջ եղած ժամանակ Նորան դիմել և գիտենք, որ նա մեզ սիրում է և մեզ կ'օգնէ: Նմանօրինակ ձգտումներ ունենալը բուդդայականին արգելուած է, նա առանց աղօթքների և առանց Աստուծոյ առատ ողորմութեան վերայ յոյս ունենալու, շղթայուած է աշխարհի կարգերի հետ, որոնց առաջ նա միայն ստակումն ու զգուանք է զգում:

Այդ սարսափն ու զղուանքն աւելի մեծանում են, քանի որ բուդդայականը թափանցում է աշխարհի խորքը: Ո՞րտեղից է այս աշխարհը: Ո՞վ է ստեղծել Նորան: Ոչ թէ Աստուած, այլ ինքը մարդը: Ի՞նչպէս կարող են մարդիկ սիրել կեանքը, երբոր նորա էլ պատճառականութեան օրէնքով և Բուդդայի տուած որոշ ձևով են աշխարհի հետ առաջ եկել: Աստուած չէ թէ աշխարհի համար հոգին ու նիւթը ո՞րտեղից առաջ եկան, այլ որ «աշխարհը ոչ սկիզբ ունի և ոչ վերջ, աշխարհի սկիզբն անիմանալի է, իսկ հոգիները գոյութիւն են քստանում ու վերանորոգում օդի միջոցով»: Աշխարհի գոյութիւնը—մարդկանց մեղքն է, քայց իսկապէս աշխարհը իրօք գո-

յուր թիւն չունի, նա առ երեւոյթ է միայն: Այն առարկաները, որոնք առաջ են եկել «ոչնչից», ձեւանում են միայն և նորից դառնում են «ոչնչ»: Իսկ այս առերեւոյթ գոյութիւն ունեցող աշխարհում ապրող մարդիկը: Նորա նոյնպէս «ոչնչ» են: Այսօր այն օրից, երբ նորա առաջ եկան, չգիտենալով հանդերձ որ կեանքը ամնջանք է միայն, հրապուրւում են Տանչով (Tanha) և հակուած են դէպի կեանքը, այդ պատճառով ենթակայ են ապականութեան: Մարմինը դատապարտուած է մահուան, ուստի պէտք է նորանից երես դարձնել, նա «ոչնչ» է: Ոգին ևս գոյութիւն չունի. նա միայն գիտութեան գոյացութեան ժամանակաւոր այրումն է, որն ամենայն ըսպէ փոփոխութեան ենթակայ է, ինչպէս հուրը: Հոգին—նեւրքին էակը—նմանապէս գոյութիւն չունի: Մարդն ամբողջապէս ներկայացնում է թափառող ոյժերի և նիւթերի մի կոյտ, բայց ոչ իրօք գոյութիւն ունեցող և անկախ զարգացող էակ: Ամենից սուրբը, ինչ որ մենք զգում ենք, Աստուծուց ստեղծուած հոգին, իւր ձգտումներով կատարելագործուելու և Աստուծոյ հետ յաւիտենական յարաբերութեան մէջ մտնելու, հոգևոր խնդիրները և ընդունակութիւնները—բոլորը մերժւում և արհամարհոււմ են: Բայց մարդկային այս դրութեան մէջ ամենից սարսափելին այն է, որ մարդ կոչուած արարածը մահուամբ չի ոչնչանում: Նորանից մնում է երեք տեսակ բան. ապրելու ցանկութիւն, գիտութեան էութիւնը և իւր մեղքի ու ծառայութիւնների գիտակցութիւնը: Կոյր Կարման այս երեք տարրերից ստեղծում է նոր մարդուն: Ահա այս է հոգւոյ կերպարանափոխութեան վարդապետութիւնը (Seelenwandelung, aber nicht Seelenwanderung), որի մէջ մերժւում է հոգիների նմանութիւնն իրենց զանազան գոյութեանց մէջ: Այսպէս իւրաքանչիւր հոգի, որպէս ժառանգ նախորդի, քարշ է տալիս «նախկին էութեան լուծը», և մաքրութեան գործը յանձնում է իւր ժառանգին, ամնջուելով անցեալի համար, միևնոյն ժամանակ պատասխանատու լինելով և ապագայի համար: Քրիստոնէական մտքով անմահութեան մասին խօսք լինել չի կարող. այստեղ խօսք կարող է լինել միայն կենդանի արարածները միմեանց հետ կապող այն նեւրքին շղթայի մասին, որը հաւանականօրէն երբ և իցէ կը կարուի: Ո՛րքան անմիտ է հոգւոյ կերպարանափոխութեան այս վարդապետութիւնը, որովհետև հոգւոյ նախկին գոյութեան մասին բոլորովին չի յիշոււմ, որովհետև այդ հակառակ է թէ փորձնական և թէ հոգեբանական փորձերին.—բարոյապէս սրպէս նա աննպատակ է, որովհետև նոր կեանքի մէջ ոչ ոք չգիտէ

ինչ բանի համար պիտի ապաշխարի և նոյն խոյ կենդանութեամբ մտնի մէջ զգում են իրենց նորա նախկին մեղքերի համար պատասխանատու: Ո՛րքան վնասակար է այդ անտուժիւնը, որ դէպի ինքնառպանութիւն է տանում, կեանքի անտանելի պայմաններէց ազատուելու և նոցա նորերով փոխանակելու համար: Բուզդայական վարդապետութեամբ ինքնառպանութիւնը մեղք է, այլ միայն յիմարութիւն, որովհետև կեանքի ծանր տանջանքը անկարելի է բոլորովին դադարեցնել: Միմիայն բոլորովին սուրբ Արաչատը (Arachat), կանգնելով Նիրվանի առաջ, կարող է համարձակ կերպով իւր վերայ ձեռք բարձրացնել:

Ի՛նչ զարմանալի բան է, որ բուզդայականը այսպիսի աշխարհայեցողութեան և կեանքի հասկացողութեան շնորհիւ արհամարհում է ամեն բան, ինչ որ գոյութիւն ունի և լի է միայն անյաղթելի յուեատես զղուանքով դէպի կեանքը: Մի փոքր մանրամասը քննենք բուզդայական դադափարի էութիւնը: «Ամեն բան տանջանք է», — այդպէս է ասում Բուզդայի քարոզած հաւատոյ դաւանանքը — չորս ճշմարտութիւնների վարդապետութիւնը, — «Տնունդը տանջանք է, ծերութիւնը, հիւանդութիւնը, մահը — տանջանք է, սիրելիից բաժանուելը, չսիրածի հետ յարաբերութիւն ունենալը տանջանք է, ուղած բանը չստանալը — տանջանք է, կարճ ասած, ամբողջ եղելութիւնը, որպէս առանձին էակ, իւր ամբողջ բնութեամբ տանջանք է: Ահա, եղբայրներ, տանջանքի պատճառն է ուրեմն ապրելու ցանկութիւնը, կեանքի վայելքը: Իսկ ձեզ համար, ո՞վ եղբայրներ, տանջանքին վերջ տալու համար ամենաբարձր ճշմարտութիւնը պիտի լինի ապրելու և վայելքների ցանկութեան խապառ ոչնչացումն ու մերժումը: Պէտք է յաղթել նորան, հրաժարուել և կտրուել նորանից: Իսկ յետմ ճշմարտութիւնը այն ճանապարհի, ո՞վ եղբայրներ, որով պիտի դուք գնաք տանջանքին վերջ տալու համար, է իմ գտած շաւիղը, որի ութ մասերը կոչուում են՝ արդար զիտութիւն, արդար կամք, արդար խօսք և դորժ, սուրբ կեանք և ձգտումն, սուրբ գաղափար և ինքնընկղմումն»:

Այնուհետև աւելի և աւելի է բացւում անդունդ քրիստոնէութեան և բուզդայականութեան մէջ: Մենք քրիստոնէաներս, որ Աստուծոյ սուրբ ենք ընդունում կեանքը, մենք որ մի փրկարար այցելութիւն ենք հաշուում, երբ տանջանքի միջոցով Աստուծոյ որդւոց շարքն ենք դառում, — այս բոլորը բուզդայականի համար անտանելի մի չարչարանք է և այդ պատճառով նոցա միայն մի ցանկութիւն ունին, հրաժարուել կեան-

քից և այն ամեն բանից, ինչ որ նորա հետ մեզ կապում է: Բուզդայականի ազատութիւնը բողոքովին ոչնչացման մէջ է: Մեղքի մասին մեր ունեցած հասկացողութիւնը, որ բաւ մեր մարդկային կամքի Աստուծոյ կամքին հակառակ լինելու մէջ է, կամքի վաւ ուղղութիւնը, որից մենք կարող ենք ազատուել ու Հոգւոյ շնորհքով, ճգնաւոր Գոտամային հեանողի համար, ի հարկէ, անհասկանալի է: Նորա համար մեղք է կեանքի ճշգրտումն ունենալը: Երանելի է այն անձը, որ կսպանի իւր մէջ կեանքի ցանկութիւնը և արտաքին բոլոր ազգեցութեանց համար խուլ կը դառնայ: Վատթար է այն անձը, որի սիրտը բաւախում է սիրով և ոյժով, գործ կատարելու ցանկութեամբ և ստեղծելու, հիմնելու ձգտմամբ: Նա իւր նպատակից — Նիրվանից դեռ շատ հեռու է կանգնած: Այդ պատճառով բուզդայականը սկսում է մի կռիւ, որ հազիւ թէ մարդ երբեկցէ սկսէր, կռիւ անձի, գոյութեան և եզելութեան դէմ: Ազատութիւնը պահանջում է անձի խեղտումն իւր սխալներով և առաքինութիւններով հանդերձ: Սէրը—նմանապէս կեանքի շրջաթայ է, ուստի կրօնաւորի, մուրացիկի գիտակցութիւնը պիտի բոլորովին օտար լինի նորա համար: Եւ եթէ այս ինքնասպանման մէջ սանձահարուած են մարդկային բոլոր յարաբերութիւնները դէպի կեանքը, Աստուած, ընտանիքը, հայրենիքը, սէրը և բախտաւորութիւնը, ազատութիւնը և դարգացումն ու աշխատանքի պարտքը, և եթէ յոգնած հոգին լի է ըթամիտ անտարբերութեամբ,—այն ժամանակ կրօնաւորը հասել է իւր փրկութեանը, սակայն առանց Աստուծոյ օգնութեան, թէև այդ հեշտ չէր կատարել, որովհետև ինքնազատութեան ճանապարհները լի էին փշերով: Կեանքի տանջանքի ճշմարիտ գիտակցութիւնն առաջին քայլն էր, երկրորդը—աշխարհից փախչելը, և ապա ինքնընկղմումն ինքնսախալումն, սանձահարումն, զոհեր և պարտականութիւններ կատարել, որ պահանջում էր ճգնաւոր Գոտամա—Բուզդան: Իսկ հոգին միայն այդ տանջանքով լի ճանապարհն անցնելուց յետոյ, հասնում է Նիրվանին: Բայց ի՞նչ է Նիրվանը: Այդ հարցին ինքը Բուզդան որոշ պատասխան չի տուել, թէև հին ճգնաւոր համայնքները հերիախոսութիւն են անուանում այն կարծիքը, թէ Նիրվանը «ոչինչ» է, այլ որ նա հոգւոյ գոյութեան շարունակութիւնն է, բայց և այնպէս մի հայեացք ձգելով այդ վարդապետի տեսութեան վերայ, ամեն բան պարզում է: Այլ հերքում է Աստուծոյ և հոգւոյ գոյութիւնը, ով գոյութեան վերայ իբրև տանջանքի է նայում, ով կեանքի ձգտման մէջ մեղք է տես-

նում և իրկութեան տակ իսպառ ոչնչացումը կեանքի, այդ տեսակ մարդու համար Նիրվանը կարող է լինել միայն բացարձակ «ոչինչ», հոգւոյ դոյութեան ընդհատումն: «Ոչնչից» ըսկսուեց բուդդայականութիւնը և իւր իմաստութիւնը վերջացնում է «ոչնչով»:

Նիհիլիստական այս իլիլիստիայութեան նպատակի, այս արմատական անաստուածութեան համար մեր բարոյագիտութիւնը՝ իւր հեղ պահանջումներով՝ բարետիրա և սիրալիւր լինել գէպի թշնամիները, կարող է անձնասիրական մի միջոց համարուել: Երբոր մենք կարդում ենք. «մի փնտրել այն, ինչ որ քեզ հաճելի է և աւելի քիչ այն, ինչ որ քեզ տհաճ է: Սէրը, որ անտեսանելի է, միայն ցաւ է բերում, որպիսի ցաւ զգում է մարդ չարը տեսնելիս, վիշտ ու դանգատը, բոլոր տանջանքներն առաջ են գալիս աշխարհի մէջ նորանից, որ մեզ հաճելի է, և որտեղ հաճոյք չկայ, չկան և նորա: Այդ պատճառով այն մարդը, որի նպատակն է վշտերի և անմարդութեանց առաջն առնել, չի կարող թոյլ տալ աշխարհի մէջ հաճելի որևէ բան» *). Եւ կամ թէ երբ մենք կարդում ենք արքայադէս Վեստանտարի (Vessantara) մասին, որ մի աղքատի կընոջ և երեխաներին իւր մօտ է վերցնում և ապա ծիծաղելով վերադարձնում և դորա համար դովաբանւում է,—երբ արքայադէս Կունարյան տանում է առանց մարդկային բարկութեան և վշտի իրեն հեռ պատահած անարդարութիւնը, և համբերում է առանց բարոյական որևէ կայծ ունենալու ճշմարտի և ոչ ճշմարտի մասին,—այն ժամանակ այդպիսի բարոյագիտութիւնը չէ կարելի չանուանել բացասական, կրաւորական, միասակար: Դէպի թշնամիներն ունեցած այդպիսի սիրոյ, բարեսրտութեան և համբերատարութեան հեռ, իւրաքանչիւր ոք գէպ իրեն վերին աստիճանի սառնասիրտ պիտի լինի, բթամիտ զգացումներով և կամ սառն շրջահայեցողութիւն պիտի ունենայ աւելի օգտակար եզրակացութեանց վերաբերութեամբ: Այսպիսի բարոյականութեան մօտ մենք պիտի յիշենք առաքեալի խօսքը. «և եթէ ես իմ բոլոր ունեցածս աղքատներին բաժանեմ և մարմինս կրակի մատնեմ, բայց սէր չունենամ, ոչինչ եմ» (Ա. Կորնթ. ԺԳ. 3): Ինչ էլ որ լինի, Բուդդան ոչ մի հասկացողութիւն չունի այն դրական, գործունեայ և ինքնուրաց սիրոյ, որի մասին մեր Փրկչի հոգով խօսում է Պօղոս առաքեալը: Բուդդան երբէք չասաց սիրել իւր թշնամիներին, բայց

*) Удана (Udana) 88.

միայն չատել նոցա: Այսպիսի կրաւորական և համբերութեան բութ բարոյագիտութիւն չէ կարող նման լինել և ծառայել իբրև լրումն այն կրօնի, որ իւրաքանչիւր մարդու տանում է Յիսուս Քրիստոսի խաչի մօտ, բարեխօսում է մեղաւորի թողութեան համար, պահպանում և վերանորոգում է անձնաւորութիւնը և փոխանակ ոչնչացնելու նորան, խոստանում է հագուն ս'չ միայն ապագայում յարատե գոյութիւն, այլ և ուսուցչի յարութեամբն երաշխաւորում է, որ ոչ մի բան աշխարհիս վերայ մեզ Աստուծոց բաժանել չէ կարող: Բուզդայականութիւնը չի կարող ապագայում խորտակել քրիստոնէութիւնը: Գուցէ, Բուզդայի վարդապետութիւնը իւր յոռեաես բարոյագիտութեան ոյժով, շնորհիւ մեր ժամանակում դէպի կրօնն եղած սառնասրտութեան, իւր համար աւելի հետևողներ ձեռք կը բերի, բայց հէնց որ կը շարժուի մարդու խիղճը և կզգայ իւր պատասխանատուութիւնը Աստուծոյ առաջ, և կամ երբ հոգին իւր խորին և սրաագին ցանկութեամբ բաւականութիւն կը պահանջի, այն ժամանակ կը մերժուի նիհիլիստական, տկարութեամբ խեղտուած փիլիսոփայութիւնը, որը մարդուն ձգտում է Աստուծոց զրկուած յաւիտենական դատարկութեան շարժման մէջ,—և մարդ կը վերագառնայ դարձեալ այն կրօնին, որ երկնքից է եկել մեզ երկինք տանելու համար: Աստուծոց ստեղծուած հոգւոյ դործնական, անբակտելի պահանջներն աւելի հաստատուն կը լինին, քան որևէ մոլորուած ցնորամտի շահագործութիւնը: Եւ եթէ այժմ, աչքի առաջ ունենալով Բուզդայով գրաւուելը՝ Յիսուս նորից մեզ հարցնելու լինէր, «իսկ դուք ի՞նչ էք կարծում, ես ս'իլ եմ», այն ժամանակ բոլորը, ոյ որ եթէ նոյն իսկ մասամբ է զգացել: Նորա սիրոյ ազդեցութիւնը, Պետրոս առաքեալի հետ կը խոստովանեն. «Գուես Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին» (Մատթ. ժԶ. 15, 16):

Թարգմ. ՌՈՍ.

Ա. Վ.

